

Լիազորագրին ներկայացվող պահանջներ

ՀՀ-ում դեղերի պետական գրանցման, վերագրանցման, գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների փորձաքննությունների նպատակով հայտերի ներկայացման համար անհրաժեշտ լիազորագրին ներկայացվող պահանջները

Սույն պահանջների համար հիմք հանդիսացող իրավական փաստաթղթերն են՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (Տես ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ընդունվել է՝ 05.05.1998թ.-ին)

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126332>

2. Մտնոտարիատի մասին՝ ՀՀ օրենք (Տես ՀՀՊՏ 2002.01.10/2(177) Հոդ.2, ընդունվել է՝ 01.03.2002թ.-ին):

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123581>

3. Հաազայի 1961թ.-ի կոնվենցիա:

<https://www.irtek.am/views/act.aspx?aid=50312>

Լիազորագիրը պետք է պարտադիր վավերացված լինի նոտարական կարգով: Լիազորագրի կրկնօրինակը ներկայացնելիս պետք է նոտարապես վավերացվի դրա և բնօրինակի համապատասխանությունը: Լիազորագրի թարգմանությունը ևս պետք է ունենա նոտարական վավերացում:

1961թ. հոկտեմբերի 5-ի Հաազայի կոնվենցիայի անդամ երկրներից ներկայացվող լիազորագիրը պետք է ապոստիլով հաստատված լինի:

1. Լիազորագրում պետք է պարտադիր նշված լինեն.

1.1 Լիազորագիրը տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, իրավաբանական հասցեն, լիազորագիրը տրամադրող իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը:

1.2 Լիազորված անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և իրավաբանական հասցեն:

1.3 Լիազորագրի տրման տարին, ամիսը և ամսաթիվը: Լիազորագիրը, որում նշված չէ դրա տրամադրման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

- 1.4 Լիազորագրի գործողության ժամկետը, որը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագիրը տրվել է երեք տարին գերազանցող ժամկետով, այն կգործի երեք տարի: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:
- 1.5 Գրանցման հայտ լրացնելու իրավունքը,
- 1.6 Պետք է հստակ նշված լինեն այն տարածաշրջանը և պետական մարմինները, որտեղ ներկայացվելու համար տրվել է լիազորագիրը:
Պետք է հստակ նշված լինի, թե լիազորագիրը տրված է լիազորող անձի բոլոր դեղերի, թե կոնկրետ տեսակի դեղերի գրանցման հայտ ներկայացնելու համար:
Պետք է հստակ սահմանված լինի լիազորված անձի՝ պետական տուրքի կամ կատարվող փորձաքննության համար վճարելու իրավունքի առկայության մասին:
Լիազորողի կողմից լիազորագրում կարող են սահմանվել նաև այլ լիազորություններ:
- 1.7 Պետք է հստակ նշված լինի՝ արդյոք լիազորագիր ստացած անձը պետք է անձամբ կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է, թե նա կարող է դրանց կատարումը վերալիազորել այլ անձի ևս:
- 1.8 Վերալիազորման իրավունքի կիրառման արդյունքում տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը, որի հիման վրա այն տրված է:
2. Լիազորագիրը ստորագրում և կնքում է լիազորողը:
3. Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ սահմանված իրավասություն ունեցող այլ անձի ստորագրությամբ:

ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ՊԱՏՃԵՆԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԻ ՁԵՎ

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների
փորձագիտական կենտրոնի տնօրեն

Արայիկ Բաղդյան

(ներկայացուցիչ, անուն, ազգանուն)

Հարգելի պարոն Բաղդյան,

Պարտավորվում եմ _____ ժամկետում Ձեզ ներկայացնել
_____ ընկերության/արտադրողի
լիազորագրի նոտարով վավերացված բնօրինակը: Խնդրում եմ մինչ այդ շարունակել
աշխատել մեզ հետ՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ տվյալները պարունակող
լիազորագրի պատճենը՝

1. տրման ամսաթիվ _____
2. լիազորագրի համար _____
3. վերջնաժամկետ _____
4. նոտարի (վավերացնող մարմնի) գտնվելու վայրը

Պատճենը կցվում է:

« _____ » _____ 20 _____ թ.

(ստորագրություն)